

ՀԱՍՏԷ
Rédaction du Journal

«Travounk»

Varna

Редакция на

Вестникъ

«Нравуникъ»

Варна

Գրասրահք եւ չին
տրոսիր

rev. Père G. Kalemkérian Michitaris
tengasce № 4 Vienne

Եկան 12 Ժր.
ամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով

Տարեկան 14 Ժր.
Վեցամսեայ 7 Ժր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլ.
Վեցամսեայ 1.50 Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԴ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԹՈՒՐԻԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՒ ՈԶ-ԹՈՒՐԻԿ ՑԵՂԵՐԸ

Թուրք մտաւորականութիւնը այսօր սահմանադրական երկու որոշ կուսակցութիւններու բաժնուած է. մին Միութենական և Ռաւաղիմական կուսակցութիւն, որ Օսմ. Գոմիթէն կը յորջորջուի, և որ Ահմէտ Րիզա պէյի կուսակցութիւնն է, իրեն օական ունենալով «Շուրաի իւմմէթ» և «Թանիս» թերթերը Պոլսոյ մէջ, և միւսը՝ Ահրար անուանեալ Ազատական կուսակցութիւնը, որ իրեն պաշտօնական օական ունի «Հուգուզը Ումումիէ» օրաթերթը:

Այս երկու կուսակցութիւններն ալ յետադիմական մտքերու գէժ պայքարող և Սահմանադրութեան շերտ պաշտպան կը ներկայանան իրենց օականներով և կը ձգտին Օսմ. կայսրութեան բոլոր բաղկացուցիչ տարրերը կամ ցեղերը իրենց հետ կապել և ցեղի ու կրօնի անխտրականութիւնը իրենց սկզբունք ունենալ կը յայտարարեն:

Քաղաքական այս երկու թուրք կուսակցութիւնները իրարու դէմ բռնուն պայքար մը սկսած են արդէն. «Սէրպէսթի» «Եֆէսի» կազմէն և «Իգտամ» կուսակցը ըլլալով Ահրար, Ազատական կուսակցութեան, կը ջանան Միութենական կուսակցութեան աղաքացիութիւնը կոտորել և բոլոր օսմանցիները Ահրարականներու շուրջը համախմբել. Բայց միւս կողմէն այսօր կառավարութեան ղեկը և զինուորական ուժին մէկ կարեւոր մասը Միութենականներուն (Իթթիհատ) ձեռքը ըլլալով, ասոնք մեծ և հզօր աղաքացիութիւն մը ունին թուրք ամբոխին մտքին և երեւակայութեանը վրայ. մանաւանդ թէ այս Միութենականները՝ զուրկ բարձրագոյն և վսեմ գաղափարներէ, իրենց միայն նպատակ ունենալով թուրք «իշխող տարր» ին տիրապետութիւնը պարտաւորել ընել տարբեր ցեղերու ու կրօններու վրայ, զեղծ, յետադէմ

և հարստահարիչ հին պաշտօնեաներու, աստիճանաւորներու և մակարոյժներու ահագին լէքէն մը իրենց կազմակերպութեան մէջ ընդունած են:

Այս բիրտ և աններգաշնակ ուժերու համախմբումը որչափ որ եւեւոյթապէս զօրաւոր ընծայած ըլլայ թուրք Միութենականաց կուսակցութիւնը, սա բարոյապէս չափ ինկած է այսօր յայտ օսմանեան ցեղերուն և նոյնպէս օտար շրջանակներու առջեւ. Անոր այս անկումէն ապահովապէս պիտի օգտուին և արդէն սկսած են օգտուիլ Ահրարականները:

Հարց է այսօր թէ թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող և իրարու դէմ բռնուն կերպով պայքարող այս երկու որոշ թուրք կուսակցութիւններուն հանդէպ ի՞նչ դիրք պէտք է բռնեն ոչ-թուրք ցեղերը, մանաւանդ քրիստոնեաները և ի մասնաւորի Հայերը:

Յայտնի է թէ տիրող տարրի հիւանդ վարդապետութիւնը՝ զոր վերջերս Միութենական «Թանիս» մէջտեղ նետեց, սահմանադրական հաւասարութեան ըսկզբունքին բոլորովին հակառակ է. որովհետեւ եթէ տիրող մը կայ տիրուող մըն ալ կայ եթէ տէր մը կայ գերի մը կամ գերիներ ալ կան. մինչդեռ ըստ Սահմանադրութեան թուրքիոյ բոլոր բնակիչները հաւասարապէս ազատ են և իրենք իրենց տէրը Միութենական Գոմիթէին ղեկավարներուն ներքին միտքը բնորոշող այս «տիրող տարր» վարդապետութեամբ ալ աչքերը բացուած պէտք է ըլլան ոչ թէ միայն քրիստոնեայ ցեղերուն, այլ նաեւ մահմետական Արաբներուն, Ալպանացիներուն. և հետեւապէս ամեն ոչ-թուրք ցեղ իր ցեղային ինքնուրոյնութիւնը ու ազապայի մէջ իր տոհմային գոյութիւնը պահպանելու հա-

մար, պէտք է սկսի միջոցներ խորհիլ Օսմ. Սահմանադրութիւնը լայն, ազատարեր և ցեղային ինքնուրոյնութիւնները որոշ կերպով յարգող հիմերու վրայ դնելու և ամրապնդելու համար:

Օսմ. Խորհրդարանին ազդեցնամով Միութենականներէ և մուսուլման յետադիմականներէ կազմուած այս անգամուան մեծամասնութիւնը ցարդ մերժեց այն բոլոր առաջարկները որոնք դէպի այդ նպատակը ցեղային ինքնուրոյնութեանց պահպանման կը ձգտէին. Այս յայտնի փորձերը բաւական ըլլալու են ոչ թուրք ցեղերու առաջնորդող տարրերը խորհրդակցութեան բերելու, համախմբուելու և վերջապէս «պլօք» կազմելու. Միութենականներու ձուլումի քաղաքականութիւնը անյաշնոյթութեան մատնելու և ցեղային ինքնուրոյնութիւնները պահպանելու նպատակաւ:

Սա երրորդ քաղաքական կուսակցութիւնը պիտի ըլլայ որ այսօրուան Օսմ. Խորհրդարանին մէջ հաւանաբար 70է աւելի ձայն պիտի ունենայ (*): Այս մեծ ոյժ մըն է, որ համաձայնելով Ահրար կուսակցութեան հետ, կըրնայ ներկայ Խորհրդարանին մեծամասնութիւնը կազմել և պետութեան գործերը վարել տալ ճշմարիտ անխտրականութեան և իրական յառաջդիմութեան ուղիով:

Ուրեմն մերինները փոխանակ կրկին պիտի պայքարեն ինքնուրոյնութեան սպառնալիքներ կարդալու որ Հայը ջարդել տալու միայն կը ծառայէ, պէտք է ոչ-թուրք ցեղերու վարիչները համախմբուելու, գործակցելու և ի հարկին «պլօք» կազմելու նախաձեռնարկը ըլլան. Բ. Գ.

(*) Օսմ. Խորհ. ին մէջ կը հաշուուին այսօր 40ի չափ արաբացի 10 Հայ, 20 Թոյն, 4 Պոլսեայ երեսփոխաններ, կան նաեւ Ալպանացի, Սերպ, Ռուսէն եւ Քիւրտեր:

Հարմանալի օրերու մէջ կ'ապրինք. Անդլիոյ արտաքին գործոց նախարար Սըր Էտուարդ Կրէյ իր մէկ ճառարտութեան մէջ ըսեր էր թէ «պէտք չէ մոռնալ որ նոր Րէթիմօն վրայ գործուած ամեն կորուստ կրնայ վտանգել թիւրքիոյ մէջ ամեն բարենորոգութիւն, եւ Մակեդոնիան ու Հայաստանը ձգել դարձեալ իր երբեմնի կացութեան մէջ»:

Պոլսոյ Թէրէմիան լրագրող սոյն տողերը հրատարակած միջոցին «Հայաստանը Քիւրտիստանի փոխելուն առթիւ Մանգումէի խմբագրութիւնը զարմա՛քով տեսեր է այդ փոփոխութիւնը եւ միամտաբար կը հարցնէ թէ ի՞նչու արդեօք...»:

Երբ հրապարակի վրայ մեր գրական Պաշկպոզուքները Հայաստանի համար, օրինակ, Փանոսեան «օրն բաղձանք», Զարդարեան, «առեղծուած», Ահարոնեան, «գառանցանք» անուանեն եւ Մանգումէ տեղ տայ սյդ վերջոյն «գրական գոհարին», զարմանալ պէտք է եթէ թերմիան թիւրք թերթը, Հայաստանը Քիւրտիստանի փոխէ, մեղաւորն ո՞վ է, եւ ի՞նչ հարկ կայ Մանգումէի զարմացման:

Հարմանալի օրերու կէջ կ'ապրինք զարձեալ:

Տիար Համբարձում Պոյաճեան (Մուրատ) կառավարիչ Մանգումէի մէջ որ կրկին ալ բառամէտքի ընտրութեան մասնակցին, — «Երբե՛ք ազատութիւնը իր նշանակութիւնը չուենար երբ կրկինը զրկուին այդ իրաւունքէ», եթէ մենք զիրենք, ազատութիւնը գործադրած չենք ըլլալ, եւ հետեւանքն այս պիտի ըլլայ, որ իրենց ձեռքէն խլուած ազատութիւնը բռնի միջոցներով պիտի փնտնեն վերստանալ եւ պիտի ապստամբին միզ դէմ, ու մենք որ ազատութիւն կը քաղուենք բռնաւորներ պիտի դառնանք: —

Ի՞նչպէս, հիւսնալի չէ՞ք գտնել Տիար Պոյաճեանի այս առաջարկը:

Թիւրք կրկին մերկանալով իր համբաւական գրութիւնը պիտի գայ զաղտնի քուէարկութեան մասնակցիլ, ո՛ր տեղ ենք. ի՞նչ ալ, կարելի՞ է ասանկ բան, եւ այն ալ Տաճկաստանի մէջ...:

Կանանց քուէարկութեան փանակցելու իրաւունքը եւրոպայի կամ Ամերիկայի ո՞ր պետութեան մէջ ընդունուեր է որ մեր այլ եւ այլ նկատմունքներով զանազան ցեղերէ բաղկացեալ թիւրքիոյ մէջ պիտի ընդունուէր:

Եւ պ. Մուրատ չորհանկ մէջ կը բերէ Ֆինլանտիան. ուր կրնորը հաւասարակէս հասարակային գործերու իբր թէ կը խառնուի եղեր. հոն կրն մը կրնայ եղեր քաղաքացիութիւնը սահմանելու համար քաղաքին մաքրութեան, փողոցներու կանոնադրութեան, չէնքերու կառուցման եւն. հոգերը:

Երա՞յ կը տեսնեն ի՞նչ կրնան մեր երանելիները:

Թիւրքիա շատ գո՞ւ պիտի է լինի, եթէ իր կրնորը յաջողին դո՞նէ առ հասարակ ոչ թէ քաղաքին, այլ իրենց բնակած տանը մաքրութեան եւ սենականերուն կանոնադրութեան եւ իրենց խոհանոցին կոկիկութեան եւ տնտեսութեան հոգ եւ խնամ տանելու վիճակին մէջ լինին: Թողունք առասպելական պահանջումները. Տօն-Քի-չտական ծրագիրները:

Ի՞նչ եւ աւելի զարմանային կողմէ՞ք լըսել, սա մեր ամենուս գիտցած վաս. պուրական աշխարհի վանայ քաղաքին մէջ օրիորդ մը ելեր Ֆինլանդ... քաղաքին, վանելի օրիորդ եւ ֆէմի-նիզմ, երկրնք եւ երկիր, նախիր եւ զէնթ. Մաշալլա... մեր հսկայական, եւ եթէ կը հաճիք, խօսական յառաջդիմութեան ըսելիք չիկայ:

Բայց յամենայն զէպս լաւ կըլար որ վանայ եւ այլ հայտնի գաւառներու մեր նորադարձ օրիորդները կոչիկէն վեր չի բարձրանալով եւ չուշանին նման խկոյն չի բացուելով իրենց առտնին գործերով զբաղէին եւ յեղափոխութեան ու յեղափոխներու հասանքէն մղուելով իրենց կոյս եւ անարատ պարկեշտութեան վրայ աւրաւորուր բիծեր չի բերեն: Անոնք որ փլիքալից խոստումներէ... քուրելով հիասթափւթեանէ վել իրենց պատւոյն լըճուելով տեսնելու դժբախտութիւնն ունեցած են շատ լաւ կը հասկնան թէ ի՞նչ ըսել կուզենք: Եւ այս պարագային հայրերը եւ մանաւանդ մայրերը մեծ պատասխանատւութիւն ունին իրենց վրայ որք աղէտը եւ իրենց զաւակաց կորուստի վիհերը իրենց իսկ ձեռք կը փորեն:

Տիար Պոյաճեան «Ազատութեան եւ նոր պահպանման պայմաններ»ուն վրայ խօսած մէջոցին ազլկանց դաստիարակութեան նկատմամբ հարեւանեցի կերպով վարկաբանութեան կը հասնի թէ աղջիկներն եթէ ոչ աւելի գո՞նէ մանչերուն հաւասար աստիճանով պէտք է կրթել:

Ինչպէս որ վաճառական մը արհեստաւոր մը եւ արուեստագէտ մը կարող են իրաւանց պատկանեալ ճիւղերուն վրայ բանաւոր կարծիքներ յայտնել եւ առողջ դատաստան կազմել այնպէս ալ աղջիկանց կրթութեան եւ դաստիարակութեան վրայ խօսող մարդ մը տուն տեղ ըլտանիք եւ աղջիկ զաւակներ ունի աղով անոնց բարոյական ֆիզիքական եւ մտաւորական կարողութիւններն ու տրամադրութիւններն ինքնին եւ ինկատ առնելով խորհուրդներ յղանալու եւ կարծիք յայտնելու է, արդիւնք առողջ դատողութեան, ապա թէ ոչ խօսքերը լոկ խօսք կը մընան եւ փրփուրի նման կանչներն:

Երբէ՞ք չէ եղած եւ չիպիտի ըլլայ եւ պէտք ալ չի կայ որ աղջիկ մը մանչու հաւասար կրթութիւն առնէ, աւոր կոչումը զատ ասոր կոչումը զատ: Աղջիկ զաւակ մը վառողի տակառ մըն է, վառողին քով կայծով մօտենայ չէլար կը բռնկի եւ կը քաղէ: Եւ կրթութեան գործին մէջ մեծ կարեւորութիւն ունի միջավայրը ինչ որ Գերմանիոյ մէջ օգտակար կ'ընայ ըլլալ:

անպայման թիւրքիոյ մէջ ալ օգտակար կըլլայ չենք կրնար ըսել միջավայրը մեծ, շատ մեծ աղղեցող թիւն ունի: Ուրիշ առթիւ կանգնողներն ալս կենսական խնդրոյն:

Ըսինք արդէն զարմանալի օրերու մէջ կտպրինք:

Առ կարգա՞ Պոլսոյ թերթերը, մէկ ծայրէն միւս ծայրը ճամայականութիւններ, եւ ուրիշ ուրիշ շոշորթաբանութիւններ են որ միջնորդը կը ողողեն, եւ պուսեցի խնթը դաւիթներն ալ աղէ հոսանքէն կը քուրն մեծ մասամբ, չըսելու համար առհասարակ:

Ձե՞ մի որ մենք տանեալ տարին եւ ի վեր գործերը չափազանցութեան տանելու մարմա՞յ մը ունինք, դուք լըսեցիք երբէք որ Հայ մը Մզկիթի մը Մէրէթէն (սմարտ) ելնէր Արդար թիւն Հաւասարութիւն Եղբայրութիւն քարոզէր, միջոցով Գոմարտի Բարա, Պէշիկթաշի մեր եկեղեցիներուն բնակը բոլորովին լայն են Հայ եւ Թիւրք կուսակցական զնկերներուն առջեւ, միջոցով վանէն Բաղէշէն, Մուշէն եւ Սասունէն եկած հեռագիրներն ու նամակներն Արդարութեան Հաւասարութեան եւ Եղբայրութեան բոլորովին տարբեր բաներու վրայ կը խօսին, յետին չար քան զառաջին ըլլալու պայմանաւ. այս է Սահաւանադրութիւնը, այս է Արդարութիւնը:

Եփացած աղաքը կացութեան տէրն են այսօր, եւ զէն ուզեր յանձն առնել որ աղղիւր քաղաքական գործերը վիշաբի առիւթ դնեն, այսինքն 500 տարուան աղղիւ պատրիարքարանի փակուի եւ հանրային գործերը այս կամ այն ինքնագլուխ, առանց վերահսկողութեան առանց հաշուառութեան գետնէն բուսած իբր թէ պատասխանատու անձանց յանձնուին, ինչպէս որ կ'ուզէին ընել էլ միջանայ մէջ, սակայն բարբառողաբար Ռաւաթ կառավարութիւնը Ձե՛ ժամուան միջոցին մէջ ցրուեց եւ հեռացուց այդ ժողովը:

Թէ ի՞նչպէս պէտք է հակադէմ չենք եւ անել այդ կազմակերպութիւնները, յաջորդով պիտի խօսինք:

Զարմանալի բերու մէջ կ'ապրինք:

Ջրառու

ՊՈԼԿԱՍՏՈՅ ԻՍԼԱՄՆԵՐԸ



Արդէն հաղորդած էինք մեր ընթերցողներուն թէ Պոլսոյ մէջ չալժամ մը սկսած է Պուլկարիոյ իսլամներուն պաշտպանութեանը համար: Այդ չարժամին նստեալներ եղած է հոն միթիկի մը գլխավորութեամբ, գլխաւորապէս կրօնականներէ կազմուած: Այն մասին Պոլսոյ թերթերը հետեւեալ տեղեկութիւնները կուտան.

«Թու մէկի իսլամ զաղթականներուն պոլսական Ընկերակցութիւնը, Պուլկարիա ապրով իսլամներուն անունով, հաւաքական աղերսագր մը ուղղեց Բ. Դիւան. օսմ. Մերակոյտին ու Սերասի. Ժողովին եւ Պերլինի զաշտպանութիւնը ստորագրող տէրութեանց: Այդ աղերսագիրը, որ տեւրակի ձեւով հաղարատու օրինակ բաշխուած է Պուլկարիոյ իսլամներուն, կըսէ թէ այդ իսլամները ենթարկուած են մեծ անիրաւութեանց, նախատինքներու, հայածումներու, եւ օրէնքին պաշտպանութիւնը բնաւ չեն վաշիւր: Նախկին բէթիմ օրով աղտոտ կ'ըզգենք բանի մը չէին կրնար ծառայել: Սակայն հիմա որ ազատական ուժերը, ինքնորոշուող ու նա

խարարական պատասխանատուութեամբ հաստատուած է Թուրքիոյ մէջ, եւ ազատութիւն ու օրէնքի պաշտպանութիւն կընծայէ ոչ իսլամ ազգութեանց, ախոր բան մըն է տեսնելը որ Պուլկարիա բնակող 600,000 իսլամներ միայն չեն օգտուիր միեւնոյն առանձնաշնորհումներէն: Հետեւաբար վերոյիշեալ զաղթականները կը խնդրեն Պերլինի զաշտպանութիւնը ստորագրող տէրութիւններէն, որպէս զի պուլկարիա կառավարութիւնը իսլամներուն վերագրած է ապօրէն կերպով գրաւուած կրօնական ստացումները եւ կրօնական ու աշխարհական վարձարաններ. նաեւ տայ կրօնական ազատութիւնները եւ բոնական արարքներու գէ՛մ պաշտպանութիւնը, միանգամայն երաշխաւորէ թէ Պուլկարիոյ միւս ազգութեանց հաւասար իրաւունք պիտի վստիւնուի:

Մենք Պուլկարիոյ մէջ կ'ապրինք եւ չենք գիտիր թէ այս երկրի իսլամներուն ղէ՛մ վերադրեալ զգնանքները երբ եղեր են: Հոս, ազատ Պուլկարիոյ մէջ հաւասար ազատութիւն եւ պաշտպանութիւն կը վայելին թէ՛ իսլամ, թէ՛ քրիստոնեայ եւ թէ՛ հրեայ հասարակութիւնները: Պուլկարիա կառավարութիւնը ոչ թէ իսլամ հասարակութիւնները կը գրաւէ, այլ ընդհակառակը նիւթապէս ալ կ'օգնէ անոնց, ինչ որ Թիւրքիա չէ ըրած տակաւին: Դաւով զտառական ճիւղին, Պուլկարիոյ զաւարանները քրիստոնէան ու իսլամը անհաշուութեամբ կը զատեն եւ անարդարութեան ղէպ մը չէ կարելի ապացուցանել:

Այսօր Սօֆիայի թիւթերէն կ'իմանանք թէ, Պոլսոյ այդ միթիկին ու իրողին հիման վրայ Բ. Դուռը դիմու ըրած է Պուլկարիա կառավարութեան եւ պատասխան ստացած է թէ այս երկրի մէջ օրէնքը հաւասար կերպով կը գործարդուի թէ՛ մահմետականին թէ՛ հրեային եւ թէ՛ քրիստոնեային համար:

Մենք փրձառութեամբ գիտենք եւ միշտ կը տեսնենք թէ Պուլկարիոյ մէջ մահմետականը Հայէն եւ Դոյնէն շատ աւելի պաշտպանութիւն եւ աշակցութիւն կը վայելէ կառավարութեան:

ՊՈԼՍԱԿԱՆ ԱՐԶԱԳԱՆՔ

Տիգրանակերտի տխրանուն երեսփոխան Թիւրքիոյ զատէ Արիֆ Էֆէնտին յանկարծամահ եղաւ անցեալ գիշեր: Այդ մարդուկը այդ իրիկունը գացած էր Դ. Բանաչի նախօրը հրամանատար հայակեր Զէքի փաշային տունը որ կէ վերապառնալէ յետոյ մեռած է, կասկածներ յայտնուած են թէ Զէքի փաշան թունաւորած ըլլայ, թէ եւ բժշկական քննութիւնը կը հաստատեն եղեր թէ սրտի հիւանդութեան մեռած է. բորտաբը բժշկական վարժարան տարուած են տարաբաւ ձեւեր համար: Զէքի փաշային հետ ժամանակ մը ի նշամութիւն ունեցած ըլլալը կը վկայուի Սերասի. Ժողովոյ նախագահ Ահմէտ Բիգա պէյ խորին ցաւով ժողովին ծանուցած է Բիւրիճիկատէին մահը:

«Սօֆիայի թերթերը կը գրեն թէ Բիգերսպուրկի մէջ Բիգա փաշա շատ աշխատել է ջնջել տալու համար Պերլինի Դաշնակապի 23-րդ յօդուածը, որ կը վերաբերի Մակեդոնիոյ ինքնօրէնութեան: Եւ Յուլիսին կատարուած

զինուորական պատմութեան բուռն պատակն ալ հղեր է արգելք յարուցանել քանի մը Տերութեանց յատակադիր, որով եւրոպացի կառավարիչ մ. պիտի ընտրուէր ինքնօրէն Մակեդոնիոյ ժէօն թերթերը. հիմակ որ Ա. տրիոյ հետ համաձայնեցան եւ Պուլկարիոյ հետ զգուշութիւնը ժողով պիտի լուծուի ժամանակը եւ չա՞ծ կը համարին յիշեալ յօդուածը վերցնել Պերլինի Դաշնակապէն, եւ ի մասին Մակեդոնիոյ նոր ի նորոյ ճշդել թերթիոյ դիրքը, որպէս զի այլեւս օտար Տէրութիւնը առաջուան պէս չը միջամտեն մակեդոնական խնդիրներուն:

Կըսուի թէ Աւստրիա եւ Գերմանիա բոլորովին համակարծիք են Թուրքիոյ միջազգային ժողովի այս եւ ուրիշ հարցերուն մասին: Արեւելք

Ժէօն թերթերը ինչու այսչափ կ'ազգայրեն արդեօք Մակեդոնիոյ եւ Հայաստանի բարենորոգմանց մասին Պէշիկի զաշնագրին 23 եւ 61-րդ յօդուածները ջնջելու, երբ տակաւին բարենորոգման շնորհը անգամ տեսնուած չէ եւ այդ գաւառներու քրիստոնէից համար կեանքի եւ ինչքի իրական ապահովութիւն գոյութիւն չունի: Եթէ չոր խոստումներ, ճառեր եւ օրինագիծեր բաւական չկան կուզեն մեր թուրք հայրենակիցները, կը սխալին. թրքական այդ տեսակ խոստումներուն եւ օրէնքներուն ինչ արժէք ունենալը բոլոր, քրիստոնեայ աշխարհին ծանօթ է եւ նոր գործերն ու աշխարհընէն, ահա Հայաստանի այսօրուան վիճակը:

Ժէօն թերթերը եթէ իրենց վրայ վստահութիւն ունին թէ արդարութիւնը, հաւասարութիւնը եւ ապահովութիւնը պիտի տիրէ ասկէ աւելին Մակեդոնիոյ եւ Հայաստանի մէջ, հարկ չէ այդ 23 եւ 61-րդ յօդուածները ջնջումին հետամտիլ, քանի որ այդ պարագային արդէն այս յօդուածները իրենց նշանակութիւնը ինքնին կը կորսնցնեն: Բայց խոստացուած բարենորոգումները իրապէս գործադրելէ առաջ ժէօն թերթերուն այս աստիճանի փութկոտութիւնը այս յօդուածները ջնջել տալու մասին, թող ներուր մեզ ըսել թէ, զօրաւոր կասկածներ կը յարուցանեն մեր մէջ, մտածելով թէ մի գուցէ Թուրքերը այս անգամ ալ բարենորոգումները գործադրելու միտք չունենան եւ խաղաղութեանը իրաւունքներն ազատու ուզեն միջազգային զաշնագրիներու պարտաւորիչ տրամադրութիւններէն: Արդեօք մեր այս կասկածին աւելի ո՞՞ր չի տար Հայաստանի մէջ Համբոյնի քիւրտ աւազակախումբերուն տակաւին ջնջել չէլողիլը եւ Մակեդոնիոյ մէջ կառավարութեան կողմէ դեռ այսօր իսկ մահմետական ժողովուրդին զէնք բաժնուելը:

Թ. Գ.

Մանգուէի մէջ կը կարգանք հետեւեալը:

«Զեկու ցուեցաւ բոլոր նահանգները որ անմիջապէս օրինական գործողութիւնները ի գործ դրուին ամեն անոնց նկատմամբ, որոնք զորոյնք կը տարաձայնեն թէ այլեւայլ տեղերու մէջ իսլամները եւ քրիստոնեաները իրարու ղէ՛մ պիտի յարձակին, թէ անագործութիւն եւ կարգապահութիւն չկայ, եւն. վասն զի առկա, կըսուի հայրենիք խաղաղութեան ենթարկուած յոյս տալուն եւ Օսմանցիները մէկ մէկու ղէ՛մ գլղուելուն մէջ չա՛ն փնտընող կապ մը անձանց գործն է, եւ որքան ալ այդ կարգի զորոյնք հիւս

քուին. դարձեալ ժողովուրդին միտքը կը գրգռուի»:

ԴԻՏ. ԽՄԲ.—

Այս զեկուցումը տեսակ մը պաշտօնական արգելք է Գրիստոնեաներուն պաշտօնականութիւն խնդրող կանխադիմելի բողոքներուն դէմ:

ՍՈՒՐԻՈՅ ՇԱՐԺՈՒՄԸ

Նոյն թերթը «Սապան»էն հետեւեալ քաղուածքը կընէ Սուրիացիներու Շարժումի մասին.

«Սապան» շանկան լուրեր կը հրատարակէ սուրիական շէյխուզիստներու լրագրէն քաղելով. ի մասին այն գրգռութեան գործը (կը) լուրացանքն Մուսթաֆայի եղբայրները շէյխապետ սուրիական անկախութեան մը հետ արար խաբարներ թանկ: Այդ շէյխուզիստներէն առաջինը Նաշա Մուսթաֆայի որ փաշա տեղական ալ կընկրէ: Ամերիկա զաւթած էր. բոլորականութեան ինքնու համար այնտեղ գտնուող 100000 Սուրիացիներու միջեւ: Երկրորդ շէյխուզիստը Մուսթաֆայի եղբայրն էր իզգէթ փաշայի ծառայութեան մէջ գտնուած է. մեծ հարստութիւն զիջելով այդ կերպով, Յետոյ Բարիզ գնաց Վարելու համար սուրիական շարժումը: «Էլ Մուզթապա» ապա մանրամասն տեղեկութիւններ կուտայ Ամերիկայէն. նաեւ Սուրիացի կազմակերպութեան մասին: Երեք կուսակցութիւն գոյութիւն ունին (Լաշիկէն է անկախութեան կուսակցից կազմակերպութիւնը որուն զընդուն կը գտնուի Նաշա Մուսթաֆայի եւ երկու թերթեր կը հրատարակեն: Երկրորդն է Սուրիոյ միութեան կուսակցութիւնը: Երրորդը կը պատկանի Սուրիացի գաղութականներու մեծ մասին, որ կուսակցից չէ Մուսթաֆայի եղբայրներու ընտանեացիներէն: Իրենց օժանդակ է «Ալ Ճամիա» որ կը պայքարէ ընդդէմ սուրիական անկախութեան ձգտող շարժումին: «Սապան» եւ «Էլ Մուզթապա» կը կարծեն թէ այդ շարժումներուն զորդներն են Սելիմ Մուսթաֆայի եւ Արաբ իզգէթի Մուսթաֆայի եւ իրենցներուն հետապնդած դիտարկութիւնը որիչ բան չէ այլ միայն խռովութիւն յարուցանելով դէպ ի մի ապետութիւն գիմել:

ԴԻՏ. ԽՄԲ.—

Սուրիացիներ ինքնավարութիւն կամ զոնէ վարչական ապակերտացման գրգռութեան պահանջներ բնաւ մենք չենք կրնար վերադարձնել Մէլիմէի մը կամ իզգէթի մը թելադրութեան. այլ ընդհանրապէս Սուրիացի ուշիմ ժողովուրդը զարգացած եւ հայրենասէր մասին չափ քանական ձգտումն է այդ գործը «Սապան» եւ «Էլ Մուզթապա» կը ջանան կեղտոտել հին բռնապետական լեւիմի մուրը քսելով անոր ճակարին:

ՅՈՒՆԱԿԱՆ

ՍԻՍՏՈՒԹԻՒՆ

Է

Մեծ միթիւն մը տեղի ունեցաւ Պոլսու Աթ Մէյմանի հրապարակին վրայ Կրէտէ կղզւոյն Յունա տանի միեղման զէմ բողոքելու համար, որուն կը մասնակցէին այլ եւ այլ սգորէրէր զատ եւ Յոյներ, որոնց մէջ աշխարհ կը զարնէին Ղալաթաի Յունաց Ս. Նիկողոս եկեղեցւոյն կրօնական գաղութը: Թղթական մարտի ր

— Լա՛ւ, ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կ'ըմաւորաց—

Հելլադաի Պոլսոյ դեսպանը պաշտօնապէս հաղորդեց Դրան թէ Յունաստան կը մերժէ Աթէնքի դատարաններուն մէջ վերաքննել կրէտէի դատարաններու վճիռները:

Փիլաւը չեղաւ, դարձաւ ապուրի, բայց ջուրը չատկէկ զի՛ր, կը վերցնէ:

Յունաստան կը կարծէ որ Կրէտէի պաշտպան չորս տէրութիւնք միայն իրաւունք ունին կղզւոյն խնդիրը լուծելու:

Իսկ Թիւրքիա— Զէ՛ մի որ քալու մեղսալի է անիկայ...

Կրէտէի Ռուս պահակ զինուորներէն ջոկատի մը Ռէթիմոնէ մեկնելուն առթիւ, օրտացաւ Նէոլոյոս կ'ըսէ:

— Կրէտէի մէջ հետզհետէ միջադատ յին շորք պիտի չ'ընայ այլ եւս եւ կ'ընդունուի կողմնակի մը պիտի չ'ընդունուի: Եւրոպական քաղաքականութեան մէջ, Աւստրիոյ եւ Պուլկարիոյ հետ չի վերջացած առէ՛ք հիմա չէ կրէտէի խնդիր մըն ալ—

Ուսկի՛ց անոնք տար Նէոլոյոս, չեմ ուզեր գրպանս ձգէ՛:

Թիւրք մամուլը կը յայտարարէ որ եթէ Յոյներ Կրէտէն Յունաստանի միացնելու խօսք ընեն, իրենց դէմ Պոլսոյ պիտի հրատարակուի ինչպէս որ եղաւ մետրիոյ դէմ,

Ասոր ի պատասխան, Պոլսէն կը հաղորդեն որ Յոյն հացագործներն ու նպարավաճառները գործադու պիտի ընեն երբ Կրէտէի խնդիրը դիտարկութեան քաղաքի տէր թէ չի տակ ըլլալին այս լուրերը, գոնէ այս միջոցաւ արթնային մերտէ իրենց գլխուն ճարը Նայելու եւ իրենց զրամն համազգեստը գրպանը դնելու համար: Ապա թէ ոչ արթնանալիք չունին մօրախնդ:

Ջանազան մասովաճառներու գործադու լիւր պիտի հսկեն Փալիթարներու ջոկատ մը, ինչպէս որ հսկեցին ողբացիալ Նահատակութեան օրիքի սպանութեան միջոցին:

Քաղաք

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մուշիկ Առաջ. փոխանորդը նոր հեռագրով մը իմացուցած է թէ տեղւոյն վիճակը օրէ օր վտանգաւոր կը դառնայ. եկեղեցի, դպրոց եւ շուկայ գոց են. երկու տարբերուն մէջ ցրտութիւնը տակաւ կը մեծնայ. գիւղերու երթեւեկը դադրած է. բռնութեամբ իսլամացած կիներ խիստ հսկողութեան տակ է հակասահ մանադրական կառավարիչը դեռ պաշտօնի վրայ է:

Նոյնպէս Մուշէն 200 կիներ հեռագրած են թէ բռնի իսլամացուցած են իրենց քոյրը եւ արդարութիւն կը պահանջեն:

Երկու հայ երեսփոխաններու դիմումին վրայ նախարարութիւնը խոստացած է Մուշի կառավարիչը պաշտօնանկ ընել:

— Վեհ. Իզմիրլեան Հայրիկի ինքնագիր մէկ նամակէն թելադրուած Մուկուայի ծանօթ բարերար ժամհարեան եղբայրները սովեալ թրքահայերու ի նպաստ հանգանակութեան ձեռնարկած են եւ 20,000 ֆր. չափ հաւաքած. կը յուսացուի որ այս գումարը 40 - 50 հազարի հասնի:

— Ռուս կառավարութիւնը Կովկասի մէջ հայոց վրայ կասկածոտ աչքով նայիլ սկսած է կըրկին: Շատ տեղեր խուզարկութիւններ, ձերբակալութիւններ տեղի կ'ունենան եւ այս անգամ հալածանքը մասնաւորապէս Դաշնակցականներու գէմ է. Գանձակի առժամեայ զինուորական դատարանը 4 տարուան տաժանակիր աշխատութեան դատապարտեց Համբարձում Սարգիսեանը դաշնակցութեան պատկանելու ամբաստանութեամբ:

— Եւրոպի Յոյները կառավարչին դիմելով, գանգատեր են Հայերուն դէմ իբր աւազակաբարոյ եւ արիւնարբու, եւ ինքնապաշտպանութեան համար թոյլտուութիւն ուզեր են որ յոյն ժողովուրդը գէնք կրէ:

— Յաւալի դէպքեր կը կարգանք Մուշէն հասնող նամակներու մէջ: Հայ գիւղացիներ պարկեշտութիւնը եւ օրինապահութիւնը պահ մը մէկ կողմ ձգած սկսած են աշխիկ փախցնել բռնի ամուսնութիւն կատարել, մրցակիցներ սպանել եւն: Սա ընդհանուր թշուառութեան միջոցին այս ալ լուծելու էր:

— Արաբկերի Առաջ. Տեղապահը հեռագրած է Սատրապաին, Օսմ. Երեսփ. ժողովոյ նախագահին եւ թերթերուն թէ Շէխէրըցի կարգ մը թուրքեր Շփիկցի Համբարձում Փափազեանի կիսը Մարիամ փողոցէն գացած միջոցին, բռնի իրենց տունը տանելով մէկուկէս ամիս պահած են եւ այսօր կը ջանան զանի բռնի իսլամացնել հօճաի մը միջոցաւ: Առաջնորդարանը իմանալով դիմած է տեղական կառավարութեան, որ պատասխանած է թէ կիներ ոչ առաջնորդարանին եւ ոչ ամուսինին չի կրնար յանձնուիլ: Ի՞նչ աղուոր աշատութիւն եւ հաւասարութիւն:

— Տփլիսի զինուորական դատարանը 17 տարեկան երկու հայ պատանի կախաղանի եւ 16 եւ 14 տարեկան երկու անչափահաս հայորդիներ ցմահ բանտարկութեան դատապարտեց: Ոսկեանը սպաննած ըլլալուն համար:



ՎԱՐՁԱՊԵՏԸ ԵՒ ՏԵՂԱՊԱՀԸ.—

Տեղապահ Սրբազանը, որ իր առաջին պաշտօնական այցելութեան միջոցին չէր կրցած ներկայանալ վարչապետին, շաբաթ օր ընկերակցութեամբ փոխառորդ Տ. Ղեւոնդ վար. Դուրեանի եւ գործակատար Գամէր էֆ. Կոչելու թիւն տուաւ վարչապետ Հիւսէին Հիւ. մի փաշայի Պատուաւորութիւններէ վերջ խօսք բացուեցաւ Երեսփոխանին խնդրոյ վրայ եւ Հիւսի փաշա պատասխանեց թէ Երեսփոխանի կառավարչին ներքին գործոց նախարարութեան ուղղուած հեռագիր մը հասած է. օրով կը խնդրուի Հայոց վանքին խնդիրը Չատկէն վերջնականութեան տանել, որովհետեւ հազարի մօտ ուխտաւորներ եկած են եւ կրնայ ըլլալ որ խռովութիւններ ծագին: Հիւսի փաշան պատասխանելով Մարաշի մէջ գրաւեալ եւ Սիսի վանքին սեփական կալուածներու մասին Տեղապահին զիտաղութեան, ըսաւ թէ լաւ կը ըլլայ որ Սահակ Ս. Կաթողիկոս կերպով մը համաձայնեց Մկրտիչ եւ Կիրակոս կաթողիկոսներու ժառանգորդներուն հետ եւ խաղաղութեամբ կարողացնէ այդ խնդիրը: Հիւսի փաշա խնդրեց տեղապահին որ այս մասին պէտք եղածը գրէ Ս. Կաթողիկոսին: Յետոյ խօսեցաւ քրիստոնէներու զինուորագրութեան վրայ եւ վարչապետը յայտարարեց թէ իրու է որ զինուորական տուրքերու տետրակներ կը շրկուին գաւառները, բայց միւս կողմէ քրիստոնէից զինուորագրման խնդիրը Օսմ. Երեսփ. ժողովին ներկայացուած ըլլալով, եթէ ընդունուի, տուրքերու համար շրկուած տետրակները պարբար պիտի ըլլան: Տեղապահ Սրբազանը մեկնեցաւ չնորհակալութիւններ յայտնելով: Այս երեք խնդիրները յիսի ներկայացուին վարչութեան յառաջիկայ նիստին: ՎԱՆԷՆ կը հեռագրեն թէ Երեւն գաւառակի մէջ գտնուող համանուն գիւղի ազգ. վարժարանին ուսուցիչները սկսած են նոր տեսակ դաւանութիւն մը քարոզել եւ ըստ այնմ զատկան եղեր աշակերտներուն. առոր վրայ ժողովուրդին հարկը հոգի ուսուցիչները վտանգելով վարժարանը կը փակեն եւ այս պատճառաւ գիւղին բնակիչները երկու մասի բաժնուելով կը սկսին իրարու դէմ յարձակիլ, տեղւոյն միւստիւրը խնդիրը կուսակալութեան տեղեկագրած ըլլալով, կեղտնէն ժանտարմանը շրկած են այս խնդրոյն վերջ մը տալու համար:

Արեւելք

Զ Ե Կ Ո Յ Ց

Կը խնդրուի մեր պարտական բաժանորդներէն որ իրենց պարտքերը շրկեն: Նոյնպէս կը խնդրուի մեր գործակալներէն հաշիւներն փութացնել մեզ:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Բնիկ Չնքաւցի Պողոս Խելքը շատեան անունով ազգային մը, որ 5-6 տարի առաջ Պուլկարիոյ Փօփ գիւղին մէջ (Փօփով) կը բնակէր եւ կը ճանչցուէր Պըշկըճը Պողոս աղա անունով: Իր հասցէն գիտցողներ թող հաճին երկտողով մը հաղորդել խմբագրութեան:

Судя по тому, что «Правда» — газетный листок